

մութեամբ կու գային հաստատուիլ Ս. Երկրին մէջ. անոնցմէ մին՝ Պետրոս վրացին, եպիսկոպոսանալէ յառաջ, Երուսաղէմ եկած էր ու հաստատած էր վանքեր, որոնցմէ մին Երուսաղէմի մէջ և միւսները Յորդանանու ափերուն վրայ կը գտնուէին: Պարոկոպիոսի համաձայն, Յուսփինիանոս ալ վրացիները չահելու համար Երուսաղէմի մէջ կառուցած է Պաշտանքը, որ բերդանման հաստատութիւն մըն է: Ժամանակի ընթացքին Ս. Քաղաքին մէջ ունեցան նաև ուրիշ վանքեր ալ և տեղական քրիստոնէից մէջ գրաւեցին ազդեցիկ դիրք մը: Արաբական իշխանութեան և Պաշակրաց ժամանակ թէև նուազեցաւ անոնց թիւը, բայց Մէմլուքներու իշխանութեան օրով Երուսաղէմի Վրացիները սկսած էին վարուիլ տիրաբար. յայտնի ըլլալով նոյն կովկասցի իշխանաւորներուն դրացնական սերտ կապակցութիւնը վրացի ժողովրդեան հետ ու անոնց չահու և այլ նիւթական յարաբերութեանց վիճակը, ինչպէս նաև վրացական թագաւորութեան դաշնակցութիւնը Եգիպտոսի Մէմլուք սուլթանութեան հետ: Վրացիք Ժ. Գ. և Ժ. Գ. դարերուն Ս. Երկրին մէջ ստացան առանձնաշնորհեալ կացութիւն մը և անոնք չափազանցօրէն բազմացան, վանական հաստատութիւնները աւելի ճոխացան, անոնց ուխտաւորները Երուսաղէմ կը մանէին մեծահանգէս և դրօշակ պարզած, արք և կանայք զինեալ վիճակով, եւ չէին վճարեր այն հողատուրքը զոր կը վճարէին ուրիշ ազգաց ուխտաւորները: 1240ին ժառ տը Վիթրիի գրած տողերը խիստ նշանակալից են. Վրացիք տակաւ առ տակաւ Յունաց զիրքը կը գրաւեն Ս. Քաղաքին մէջ, վասն զի Մէմլուքները՝ ինչպէս Յոյները, նմանապէս միւս քրիստոնեաները հանգիստ չէին թողուր: Իշխանութեամբ և զիրքով զօրացած Վրացիք՝ նախանձու ոգւով լցուած՝ կ'ուզէին յափշտակել Գողգոթայի հայկական եկեղեցին պարզապէս շահագործելով մէմլուք իշխանութեան իրենց նկատմամբ ունեցած և վերեւ պարզուած կապակցութիւնները: Մեր պատրիարքարանի արաբերէն վաւերագիրներու պարունակութեանէն յայտնի կ'ըլլայ որ Վրացիք 1316ին խլրտեցան յափշտակելու Գողգոթան. նոյնը կրկնեցին 1395 ին. երկիցս կատարուած այս ապօրէն ձեռնարկներն անհետեանք մնացին Հայոց Միաբնութեան՝ Մէմլուք իշխանութեան մօտ կատարած ազդու դիմումներուն հետեանքով. բայց Մէմլուքներու այդ շփոցած գաշնակիցները առիթ կը փըն-